Փոքրիկ աղջիկը ոչինչ չպատասխանեց եւ իմ վրայ ուշադրութիւն անգամ չդարձրեց, միայն գցելով մօրս մօտ թաշկինակի մէջ կապած մի բան, վազեց դէպի վառարանը եւ սկսեց իր լրջացած ձեռքերը տաքացնել արդէն մարած կրակով: Երբ նկատեց, որ ջերմութիւն չկայ, գնաց մօրս մօտ, եւ գրկելով նրա պարանոցը, կպաւ կուրծքին:

— Հայրս ուղարկեց, — ասաց նա, ցոյց տալով կապոցը:

Յետոյ դարձաւ դէպի ինձ, կարծես նա չէր կարող համբերել, որ իմ կոշտ հարցմունքը թողեց առանց պատասխանի:

— Ես քեզ նման պառաւ տատիկ չեմ, որ կրակի մօտը նստեմ, ու տնից դուրս չգամ:

Մօրս տխուր դէմքի վրայ երեւաց մի անսովոր ժպիտ, նա դրեց Մարոյի սառած ձեռքերը իր ծոցի մէջ, եւ գրկելով նրան, սկսեց տաքացնել: Նրա լեզուն բացոեցաւ:

— Հարսի՛, — ասաց նա մօրս մի առանձին ուրախութեամբ, — այնքա՜ն ձիւն է եկել, այնքա՜ն ձիւն է եկել, ուղիղ մի արշին, — տես այսքան (նա ձեռքով չափեց իր ոտքից մինչեւ գլուխը): — Ֆարհատ, — դարձաւ նա դէպի ինձ, — առաւօտեան ձնագնդի կը խաղանք, այնպէս չէ՞: Ու՞ր է Մարիամը, — խօսքը փոխեց նա, — թո՛ղ լուսանայ, ես նրա աչքը կհանեմ... Մագթաղին ձիւնով չեմ խփի, նա լաւ աղջիկ է: Բայց այդ սատկած Մարիամը, բերնումը ինչ որ գալիս է, դուրս է տալիս... Թո՛ղ լուսանա...

— Ես ինքս կը ծեծեմ Մարիամին, կը պատոիրեմ, որ քեզ վատ բան չասէ, — հանգստացնում էր նրան մայրս:

— Լեզուն կտրէ՛ր, որ սուս կենայ:

— Կը կտրեմ... — պատասխանեց մայրս ժպտալով:

Մարօն տեսնելով, որ պատիժը աւելի սաստիկ պէտք է լինէր,քան այն վիրաւորանքը, որ Մարիամը հասցրել էր նրան, ետ առեց իր խօսքը:

— Չէ, մի՛ կտրէ, ասա, որ ինձ վատ բան չասի, թէ չէ ծամերը մէկ-մէկ կփետրեմ...

Մայրս սեղմեց նրան իր կուրծքին եւ համբուրեց:

— Հարսի, — առաջ տարաւ շատախօս Մարօն, — ի՜նչ լաւ է ձիւնը... վազում ես, վազում, չես կշտանում... ընկնում ես, այնքան փափուկ է, որ կողքդ չէ ցաւում... — Հարսի, ե՞րբ կը սառչի մեր լիճը:

Մարոյի վերջին հարցմունքը մեր տան մօտ գտնուած փոքրիկ լճակի մասին էր, որը ձմեռը սառչելով, մեծ զուարճութիւն էր պատճառում խաղա-